

Եզրափակուեցաւ Հայաստան-Սփիւռք 6-րդ Համահայկական Համաժողովը

Մեպտեմբերի 18-ին Կ. Տէմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ մեկնարկած Հայաստան-Սփիւռք 6-րդ համահայկական համաժողովը հասաւ իր եզրափակիչ հանգրուանին:

Լիագումար նիստին ընթացքին բացման խօսքով հանդէս եկաւ ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը: Համաժողովի մասնակիցներուն իր օրհնութեան խօսքը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ելոյթ ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանը: Ներկաները ողջունեց Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակո Սահակեանը, իսկ օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս:



«Փոխադարձ վստահութիւն, միասնականութիւն եւ պատասխանատուութիւն» Հայաստան-Սփիւռք 6-րդ համահայկական համաժողովին կը մասնակցէին աւելի քան 1800 ներկայացուցիչ: Այս տարի զգալիօրէն ընդլայնուած էր մասնակցութեան աշխարհագրութիւնը, համաժողովին կը մասնակցէին աշխարհի 71 երկիրներու հայկական կազմակերպութիւններու եւ կառոյցներու ղեկավարներ ու ներկայացուցիչներ, տարբեր երկիրներու պետական հայազգի պատգամաւորներ, նախարարներ, տեղական մարմիններու մէջ ընտրուածներ՝ 1500-է աւելի մասնակից, իսկ Արցախը կը ներկայացնէր 40 մասնակիցներէ բաղկացած պատուիրակութիւն մը: Հայաստանի Հանրապետութենէն համաժողովին կը մասնակցէին շուրջ 400-է աւելի պետական, քաղաքական, մշակութային գործիչներ, գիտնականներ ու լրագրողներ: Մեծ պատուիրակութիւններ ժամանած էին Ռուսիոյ Դաշնութենէն (259), Ամն-էն (213), Ֆրանսայէն (92), Լիբանանէն (107), Սուրիայէն (44), Իրան (56), Արժանթինէն (35), Գանատայէն, Թուրքիայէն, եւ Վրաստանէն: Առաջին անգամ ըլլալով համաժողովին կը մասնակցէին Մալեզիայէն, Թայլընտէն, Սինկապուրէն, Ճափոնէն, Մեքսիքայի, Եթովպիայի, Սուտանէն, Սիանմարի համայնքներէն ներկայացուցիչներ:

Մասնակիցներու 35 տոկոսէն աւելին կանայք էին, եւ մօտ 20 տոկոսը կը կազմէին երիտասարդները: Համաժողովի ընթացքին տեղի ունեցան 2 լիագումար նիստեր, ինչպէս նաեւ 4 ուղղութիւններով նախատեսուած 16 թեմատիկ նիստեր նուիրուած Հայաստանի տնտեսութեան զարգացման, տարածաշրջանային մարտահրաւերներուն ազգային ապահովութեան օրակարգին, արտաքին քաղաքականութեան օրակարգին եւ Հայոց Յեղասպանութեան հետեւանքներուն վերացման, հայապահպանութեան հիմնախնդիրներուն: Համաժողովի ընթացքին տեղի ունեցան նաեւ 2 կլոր-սեղան-քննարկումներ: Առաջին կլոր-սեղան քննարկումը կը վերաբերէր համահայկական խորհուրդի ձեւաւորման իսկ երկրորդը նուիրուած էր Հայաստանի Հանրապետութեան հոշակման եւ Մայիսեան հերոսամարտերու 100-ամեակին, ինչպէս նաեւ Էրեբունի-Երեւանի 2800-ամեակի տօնակատարութիւններու կազմակերպման եւ նախնական ծրագրերու քննարկման:

Համաժողովի երկրորդ օրուան լիագումար նիստի ընթացքին հանդէս եկաւ ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանը՝ «ՀՀ կառավարութեան տնտեսական քաղաքականութեան հիմնադրոյթները» թեմայով:

Շարունակութիւնը էջ 6

Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը 26 Տարեկան է

Հայաստանի Հանրապետութիւնը 21 Մեպտեմբերին նշեց անկախութեան 26-րդ տարեդարձը

Հայ ժողովուրդը 26 տարի առաջ այս օրը հանրաքուէի միջոցով իր վճռական «այո»-ն րսաւ Հայաստանի անկախութեան: Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 26-րդ տարեդարձը «Համաձայն էք, որ Հայաստանի



Հանրապետութիւնը ըլլայ ժողովրդավարական անկախ պետութիւն՝ ԽՍՀՄ կազմէն դուրս» հարցումին դրական պատասխան տուաւ: Երկու օր անց՝ 23 Մեպտեմբերին, երկրի Գերագոյն Խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ, ինքնիշխան հանրապետութիւն:

Հայաստանի ազգային տօնացոյցի կարեւորագոյն այս տօնի «հիմնադրման» նախորդած էր 1990 թուականի 23 Օգոստոսը, օր, երբ սկիզբ դրուեցաւ անկախ պետականութեան հաստատման գործընթացին: Հայաստանի նորընտիր Գերագոյն խորհուրդը իր առաջին նստաշրջանի ժամանակ ընդունեց «Հայաստանի անկախութեան մասին» հռչակագիրը, որով հանրապետութեան խորհրդարանը ազդարարեց անկախ պետականութեան հաստատման գործընթացի սկիզբը: Հռչակագրի ընդունումէն անմիջապէս ետք՝ 24 Օգոստոսին, ՀԽՍՀ Գերագոյն խորհուրդը որոշեց Հայկական Խորհրդային Մոնղալիստական Հանրապետութիւնը վերանուանել Հայաստանի Հանրապետութիւն, իսկ գործող տասներկուերորդ գումարման Գերագոյն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետութեան առաջին գումարման Գերագոյն խորհուրդը:

Հռչակագրի ընդունմամբ հայ ժողովուրդի կեանքին մէջ նոր ժամանակաշրջանի սկիզբ դրուեցաւ եւ Հայաստանի պատմութեան մէջ սկսաւ երրորդ հանրապետութեան կառուցումը: Արդիւնքով՝ Հայաստանի տարածքին կը գործէն միայն ՀՀ Սահմանադրութիւնը եւ օրէնքները: Հայոց պետականութեան կրողը Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդն է: Հայաստանի տարածքին բնակող բոլոր քաղաքացիներուն համար կը սահմանուի Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը: Արտերկրի հայութիւնը Հայաստանի քաղաքացիութեան իրաւունք ունի:

Նորանկախ Հայաստանի առաջին Սահմանադրութիւնը ընդունուած է 5 Յուլիս 1995-ին՝ համաժողովրդական հանրաքուէի արդիւնքով: Գործող Սահմանադրութիւնը ընդունուած է 27 Նոյեմբեր 2005-ին՝ դարձեալ համաժողովրդական հանրաքուէի արդիւնքով: Հայաստանի Հանրապետութեան դրօշը եռագոյնն է, նորանկախ Հայաստանի զինանշանը՝ Հայաստանի առաջին Հանրապետութեան /1918-1920 թ.թ./ զինանշանն է, որու հեղինակներն են ճարտարապետ Ալեքսանդր Թամանեանը եւ նկարիչ Յակոբ Կոջոյեանը: Հայաստանի օրհներգը եւս Հայաստանի առաջին Հանրապետութեան օրհներգն է: Խօսքերուն հեղինակը Միքայէլ Նալբանդեանն է, երաժշտութիւնը հեղինակած է Բարսեղ Կանաչեանը:

21 Մեպտեմբերը ազգային հպարտութեան օր է. անկախ հայրենիք ունենալու հայ ժողովուրդի դարաւոր երազանքը 26 տարի է ի վեր իրականութիւն է:



Αντσούκ-Μορτσούκ...

Μια σειρά άρθρων υπέρ της ενότητας
της αρμενικής κοινότητας στην Ελλάδα

του Σήφη Κασσεσιάν

**ΠΟΣΟ ΑΝΕΞΑΡΤΗΤΗ ΗΤΑΝ Η ΔΗΜΟΚΡΑΤΙΑ
ΤΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ ΤΟΥ 1918-1920;
ΜΕΡΟΣ Β'
Η ΕΝΤΟΛΗ ΕΠΙ ΤΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ**

Η «ανεξαρτησία» ενός τμήματος των εθνικών αρμενικών εδαφών στην περίοδο 1918-1921 και η δημιουργία επ' αυτών μιας «ανεξάρτητης» δημοκρατίας, η οποία τα τελευταία χρόνια χαρακτηρίζεται ως «Πρώτη Αρμενική Δημοκρατία» είναι ένα ιστορικό γεγονός που δίχασε για πολλές δεκαετίες τον αρμενικό λαό. Από τη μία πλευρά υπήρξε μια μάζα Αρμενίων, η οποία, αγόμενη από κάποιες συναισθηματικές ανάγκες ή -αυτό ισχύει για μια μικρή μειοψηφία- από πολιτική σκοπιμότητα μυθοποίησε την αρμενική κρατική οντότητα της παραπάνω εποχής και αγιοποίησε τους ηγέτες του εν λόγω κρατικού μορφώματος. Άκριτα. Χωρίς γνώση και χωρίς ανάλυση των ιστορικών γεγονότων, του διεθνούς συσχετισμού των δυνάμεων και των εν γένει αντικειμενικών συνθηκών που ευνοούσαν ή αντιμάχονταν τις ελπίδες και τις επιδιώξεις του αρμενικού λαού. Στον αντίποδα της πρώτης, μια άλλη μάζα δαιμονοποίησε ipso facto την «Πρώτη Αρμενική Δημοκρατία» και τους ηγέτες της και αρνήθηκε την όποια θετική συμβολή της στην ιστορία του λαού μας. Το έπραξε αυτό το ίδιο άκριτα όσο και η πρώτη. Χωρίς διάθεση κριτικής προσέγγισης στα ιστορικά γεγονότα, διαλεκτικής ανάλυσής τους.

Αμφότερες οι ανωτέρω προσεγγίσεις είναι χωλές. Η «Πρώτη Αρμενική Δημοκρατία» δεν υπήρξε ούτε Παράδεισος ούτε Κόλαση και οι ηγέτες της δεν υπήρξαν ούτε άγγελοι ούτε δαίμονες. Το αρμενικό κράτος της εποχής εκείνης υπήρξε δημιούργημα της σύμπτωσης πολλών συνθηκών, ενδοαρμενικών και εξωαρμενικών και προκειμένου να διεκδικήσει το δικαίωμα να χαρακτηριστεί ορθή -στο ανθρώπινο πάντα μέτρο- η τοποθέτησή μας απέναντί του πρέπει να γίνεται λαμβανομένων υπόψη αυτών των συνθηκών.

Στη σειρά αυτών σημειωμάτων προσπαθούμε να κάνουμε ακριβώς αυτό: να δούμε την «Πρώτη Αρμενική Δημοκρατία» μέσα στο πλαίσιο των συνθηκών της εποχής της και να κρίνουμε τους ηγέτες της από τα πεπραγμένα τους και όχι φερ' ειπείν από το αν η μύτη τους ήταν κόκκινη ή μεγάλη ή στραβή. Αυτό το εγχείρημα είναι τρόπον τινά ένθετο στο γενικότερο εγχείρημα της σειράς των άρθρων μας, η οποία επιχειρεί μια ανάλυση των λόγων που έχουν οδηγήσει στη διάσπαση της αρμενικής κοινότητας της Ελλάδας. Κι αυτό διότι η μια από τις πλευρές της διασπασμένης κοινότητας μας -εκείνη της Αρμενικής Επαναστατικής Ομοσπονδίας- χρησιμοποίησε την «Πρώτη Αρμενική Δημοκρατία» ως επιχείρημα για την αντιπαράθεσή της με την άλλη και ως όπλο για την επιβολή της επ' αυτής.

Προκειμένου να αφαιρέσουμε από τη φαρέτρα των διχαστικών επιχειρημάτων της ηγεσίας της Αρμενικής Επαναστατικής Ομοσπονδίας το επιχείρημα της εμφάνισης της «Πρώτης Αρμενικής Δημοκρατίας» ως μέγιστου επιτεύγματος, οφειλόμενου στο παραπάνω κόμμα, επισημάναμε σε προηγούμενα σημειώματα κάποιες τεράστιες αδυναμίες της, οι οποίες την απομυθοποιούν και σχετικοποιούν τη θέση της στην αρμενική ιστορία. Έτσι, θέσαμε επί τάπητος τα ζητήματα της υπογραφής της ταπεινωτικής Συνθήκης του Μπατούμ ως πρώτης διεθνούς πράξης του νεοϊδρυθέντος αρμενικού κράτους αδυναμίας της «Πρώτης Αρμενικής Δημοκρατίας» να υπερασπιστεί τα κρατικά της σύνορα και την ως εκ τούτου απώλεια των επαρχιών του Καρς και του Αρνταχάν, την αδυναμία προσφοράς ουσιαστικής βοήθειας στους Αρμενίους του Γαραπάγ και του Ναχιτσεβάν και την εξευτελιστική εκ των προτέρων αποδοχή της επιδιαιτησίας του Γούντροου Γουίλσον -ως προσωπικότητας και όχι ως φορέα της επίσημης κρατικής πολιτικής των ΗΠΑ- στο ζήτημα της χάραξης της αρμενοτουρκικής μεθορίου.

Το ζήτημα της εντολής (mandate) επί της Δημοκρατίας της Αρμενίας είναι ένα άλλο σημείο που καταρρίπτει και αναιρεί τους ισχυρισμούς περί του ότι το εν λόγω κράτος ήταν ανεξάρτητο. Με τον όρο «εντολή» οι νικητές του Α' Παγκοσμίου Πολέμου προσπάθησαν να συγκαλύψουν με ένα εύσχημο προσωπείο τις αποικιοκρατικές βλέψεις τους σε βάρος των λαών της Εγγύς Ανατολής οι οποίοι είχαν κερδίσει με αγώνες το δικαίωμα να απελευθερωθούν από την οθωμανική δεσποτεία. Προκειμένου να επιβάλουν τον έλεγχό τους επ' αυτών των λαών, οι Δυτικοί ιμπεριαλιστές τους χαρακτήρισαν ως «ανέτοιμους» για ανεξάρτητη πολιτική ύπαρξη και ανέλαβαν την «προστασία» τους. Κατέστησαν, δηλαδή, τις πατρίδες τους προτεκτοράτα. Οι ευρισκόμενοι σε κατώτερο στάδιο πολιτιστικής ανάπτυξης από τους Αρμενίους Άραβες αντέδρασαν σε αυτό το εγχείρημα του δυτικού ιμπεριαλισμού και χρειάστηκε να χυθεί αίμα προκειμένου να τους επιβληθεί. Η «ελεύθερη και ανεξάρτητη» Αρμενία, αντίθετα, επιζήτησε η ίδια να δεθεί με τα δεσμά της εντολής. Οι πολιτικοί εκπρόσωποι της «Πρώτης Δημοκρατίας» εκλιπαρούσαν Αμερικανούς και άλλους να αναλάβουν την εντολή επί της «ελεύθερης και ανεξάρτητης» πατρίδας τους. Και καλά έπραξαν. Προωθώντας τα δικά τους συμφέροντα, οι ιμπεριαλιστές της Δύσης, ίσως προστάτευαν την Αρμενία από το κεμαλικό γιαταγάνι. Ωστόσο, αυτή η πολιτική της επατείας για επίτευξη της εντολής δείχνει πόσο περιορισμένη ήταν η «ανεξαρτησία» της «Πρώτης Δημοκρατίας». Οι προβάλλοντες σήμερα μια εξιδανικευμένη εικόνα της «Πρώτης Δημοκρατίας» ή είναι ανιστόρητοι ή συνειδητοί -προς ίδιων όφελος- παραχαράκτες της ιστορίας.

**Μπορούμε να αγαπάμε - να αγαπάμε τους ξένους
λαούς χωρίς να παύουμε να είμαστε πατριώτες**

Άννα Σεβνταγιάν

Όλοι ξέρουμε από την ιστορία ότι πολλοί άνθρωποι αγάπησαν και άλλους λαούς, εκτός από την ιδιαίτερη πατρίδα τους. Πολλοί μάλιστα από αυτούς έδειξαν την αγάπη τους και την εκτιμησή τους θυσιάζοντας και την ζωή τους.

Τα αίτια που μας προκαλούν αυτή την αγάπη είναι πολλά. Η μεγάλη επιστημονική πρόοδος πολλών κρατών, έχει σαν αποτέλεσμα να κερδίζουν τον θαυμασμό μας και την αγάπη μας, αν αυτή η πρόοδος χρησιμοποιείται για το καλό και των άλλων κρατών. Πολλές φορές ο άνθρωπος για πολλούς και διαφόρους λόγους είναι αναγκασμένος να εγκαταλείψει την πατρίδα του (διωγμός, μετανάστευση, οικονομικοί λόγοι). Ο άνθρωπος αυτός πρέπει να αγαπήσει τον νέο του τόπο για να μπορέσει να προοδεύσει σε αυτόν και βέβαια εάν δεν τον αγαπήσει και δεν τον πονέσει θα αποτύχει σε κάθε του προσπάθεια. Εκτός από αυτό βέβαια εάν δεν αγαπάμε και δεν εκτιμάμε τους άλλους λαούς δεν είναι δυνατόν η μεταξύ τους συνεργασία. Με την συνεργασία αυτή θα υπάρξει κατανόηση και πολλά προβλήματα που μαστίζουν την ανθρωπότητα μπορούν να λυθούν με καλοπροαίρετες διαπραγματεύσεις.

Εδώ τίθεται όμως και το εξής ερώτημα. Μήπως η αγάπη μας για τους άλλους λαούς έχει σαν αποτέλεσμα να μην αγαπάει κάποιος την ιδιαίτερη πατρίδα του; ΟΧΙ. Κάθε άνθρωπος αγαπά και τους άλλους λαούς και την ιδιαίτερη πατρίδα του και την αγάπη αυτή θα την δείξει όποτε την χρειασθεί. Πώς μπορούμε να ξεχάσουμε την πατρίδα μας έστω και αν βρισκόμαστε μακριά; Την αγάπη αυτή μπορεί κάποιος να την δείξει με διάφορους τρόπους, βοηθώντας οικονομικά, θυμίζοντας σε όποιο σημείο της γης και να βρίσκεται τα δικαιώματα και τις θυσίες του λαού του, μη ξεχνώντας την γλώσσα του τα ήθη και τα έθιμά του, την θρησκεία του και τους αγώνες των προγόνων του για να κρατηθεί στον χάρτη αυτή η μικρή κουκίδα γης που υπάρχει.

Έτσι λοιπόν και εμείς οι Αρμένιοι αναγκαστήκαμε να εγκαταλείψουμε την πατρίδα μας διωγμένοι από τους Τούρκους. Εδώ θα σταθώ στο σημείο που οι Αρμένιοι έφτασαν στην φιλόξενη Ελλάδα δημιουργώντας μια παροικία 10.000 κατοίκων. Σήμερα αυτή οι κοινότητα αριθμεί περίπου 70.000 κατοίκους. Σε αυτή την κοινότητα ανά την Ελλάδα λειτουργούν εκκλησίες, σχολεία, πολιτιστικοί σύλλογοι και εκδίδονται εφημερίδες.

Γνωστοί Αρμένιοι που διέπρεψαν ανά τον κόσμο μακριά από την πατρίδα τους και δεν την ξέχασαν ποτέ ήταν: ο Αράμ Χατσατουριάν (συνθέτης) Σάρλ Αζναβούρ (τραγουδιστής), η Cher (τραγουδίστρια), ο Μαρτιρός Σαριάν (ζωγράφος) Ουίλιαμ Σαρογιάν (συγγραφέας), ο Ατόμ Εγκογιάν (σκηνοθέτης), ο Γιουσούφ Καρς (φωτογράφος). Επίσης αρμενικής καταγωγής από την Καππαδοκία ήταν η βυζαντινή δυναστεία των Φωκάδων και οι αυτοκράτορες Νικηφόρος Φωκάς και ο Λέων Ε' ο Αρμένιος. Ο Αρτέμ Μικογιάν ήταν ο ιδρυτής της εταιρείας MIG και σχεδιαστής γνωστών μαχητικών αεροσκαφών όπως τα MIG -21, ενώ ο Σιμόν Κιρλιάν ανακάλυψε την φωτογραφία Κιρλιάν, ενώ ο Χαϊγκάζ Σολακιάν έφερε την πρώτη τηλεόραση στην Ελλάδα.

Δεν μπορώ όμως να μην αναφέρω και έλληνες που διέπρεψαν μακριά από την πατρίδα τους χωρίς να δημιουργήσουν προβλήματα εκεί που πήγαν αλλά δεν ξέχασαν και την πατρίδα τους: Είναι ο Γεώργιος Αβέρωφ που έφυγε για το Κάιρο στα 19 του χρόνια, δέχτηκε τον σεβασμό της εκεί κοινωνίας και αποκτώντας μεγάλη περιουσία βοήθησε την Ελλάδα στην επέκταση του Μετσόβιου Πολυτεχνείου, στην αναμόρφωση του Παναθηναϊκού Σταδίου και πολλά άλλα σημαντικά ευεργετήματα που το κυριότερο μπορώ να πω ότι είναι η δωρεά στο Πολεμικό Ναυτικό και η ναυπήγηση του θωρηκτού ΑΒΕΡΩΦ. Επίσης να θυμηθούμε και άλλους ευεργέτες που δεν ξέχασαν και βοήθησαν από μακριά: Αλέξανδρος Υψηλάντης, Γεώργιος Παπανικολάου, Αποστόλης Αρσάκης, Ιωάννης Σισμανόγλου, Μιχαήλ Τσιτίτσας και πολλοί άλλοι.

Καταλήγοντας συμπεραίνουμε ότι είναι δυνατόν να αγαπάμε και να εκτιμάμε την χώρα και τον λαό που μας δέχτηκε χωρίς να παύσουμε να αγαπάμε και να ξεχνάμε την ιδιαίτερη πατρίδα μας. Με την αγάπη αυτή και μην ξεχνώντας την καταγωγή μας είναι δυνατόν να πραγματοποιηθεί αμοιβαία φιλία μεταξύ των λαών με αποτέλεσμα την ειρήνη, την πρόοδο και την ανάπτυξη των λαών αυτών.



Հայեացքն Արցախին ուղղելու հարցում ոչ մի պատճառաբանություն չպետք է լինի.

ՌԱԿ Գերագոյն խորհրդի նախագահ

«Հայ Զայնի» գրուցակիցն է ՌԱԿ Գերագոյն խորհրդի նախագահ Վարդան Նազիրեանը (ԱՄՆ, Լոս Անճելես), որ զանազան առիթներով եղել է Արցախում, ծանոթացել Արցախի զարգացմանը եւ մեծ ապագայ է տեսնում Հայոց Երկրորդ Հանրապետության համար:



-Պարոն Նազիրեան, քանի՞ անգամ էք եղել Արցախում եւ ինչպիսի՞ տպավորություններ ունեք:

Եթե եղել էք մի քանի անգամ, ապա ինչպիսի՞ փոփոխություններ էք նկատել:

-Նախ ուզում եմ շնորհավորել բոլոր արցախցիներին եւ համայն հայությանը Արցախի անկախության առթիւ: 26 տարի առաջ, այդ դժուարին օրերին Անկախության հռչակագրի ընդունումը իրապես նւաճում էր հայոց նորօրեայ պատմության մէջ:

Ես Արցախում եղել եմ մօտ հինգ անգամ: Ինչպէս հայության ներկայով եւ խնդիրներով ապրող եւ մտահոգ իւրաքանչիւր հայ, ծանօթացել եմ Արցախի զարգացման ծրագրերին, հիացել արցախցու աշխատասիրութեամբ, իր հողին կառչած մնալու կամքով եւ այն հեռանկարով, որ այդ ժողովուրդը կերտում է հինաւորց իր հողի վրայ, անշուշտ Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի գօրակցութեամբ:

-Հնարաւո՞ր է, որ Արցախում արդէն հասցրել էք ինչ որ ծրագրերի իրականացմանը մասնակցել, եթէ այո, պատմե՞ք խնդրում եմ:

- Այո, ես ոչ մի մեծ նախագիծ եմ իրականացնում Արցախում. հող եմ գնել եւ այն յանձնել եմ մշակման՝ ստեղծելով աշխատանքի մի փոքր հնարաւորութիւն:

Մշակումից բացի այդ տարածքում գոմ եմ սարքել տուել, ծառեր ենք տնկել, ջրագիծ ենք անցկացրել...

Նախագիծը փոքր է, բայց ընդլայնելու հեռանկար կայ, քանի որ գիւղատնտեսական մեծ հնարաւորութիւն եմ տեսնում եւ ուզում եմ իմ ներդրումն ունենալ այդ բնագաւառում: Արցախի հողը բերրի է, արցախցին լաւ գիտի այդ հողի լեզուն եւ իր աշխատասիրութեամբ մեծ արդիւնքների կարող է հասնել:

Կը ցանկանայի, որ այս ուղղութեամբ մտածին բոլոր նրանք, ովքեր քիչ թէ շատ հնարաւորութիւն ունեն եւ առաջին իսկ անհրաժեշտութեան դէպքում այդ հնարաւորութիւնը ներդնեն Արցախում:

Այս ծրագրից գատ, նաեւ մօտ եմ Պարգև Սրբազանի հետ, թեմին շինարարական օժանդակութիւն եմ յատկացրել:

Մայիսին Շուշիի ազատագրման միջոցառումներին մասնակցեցի, եւ արցախցու ոգին այս օրերին աւելի շատ զգացի... Արցախցին գիտի ինչպէս քաջօրէն պատերազմել, այնպէս էլ հպարտօրէն տօնել իր յաղթանակները: Այդ ոգին վարակիչ է եւ փոխանցում է իւրաքանչիւր հայրենասէր հայի:

Ամէն անգամ, երբ Արցախ եմ գնում, աւելի եմ խանդավառում: Կարող եմ ասել, գալու է օր, որ Արցախը դառնալու է եւրոպական մակարդակի երկիր. հիւրանոցների, ռեստորանների սպասարկումը ոչնչով չի զիջում, դրան գումարած՝ արցախցու հիւրասիրութիւնը, բարեացակամութիւնը՝ հայի թէ օտարի հանդէպ, գրաւում է ամէն մարդու: Յատկապէս սա մեծ արժանիք է, որ փնտռուած է աշխարհում:

- Նշեցի՞ք, որ կ'այցելէք Արցախ: Ինչպիսի՞ ծրագրերով:

-Ցանկութիւն ունեմ ՌԱԿ գործունէութիւնը նաեւ Արցախում ակտիւացնել, եւ յաջորդ այցերիս նաեւ այդ ուղղութեամբ պէտք է աշխատեմ:

Իսկ ընդհանրապէս, Արցախում միշտ էլ անելիք կայ, Արցախն ինքն է իր գաղտնիքներով եւ գրաւչութեամբ ամէն անգամ յուշում, թէ ինչ կարելի է անել: Հնարաւորութիւնները շատ են: Եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը պէտք է ուսումնասիրի, տեսնի, թէ այդ հնարաւորութիւնները ինչպէս կարելի է օգտագործել:

-Ի՞նչ նշանակութիւն ունի Արցախի Հանրապետության անկախության փաստը սփիւռքում ապրող հայի եւ անձամբ Ձեզ համար:

-Սփիւռքը տասնամեակներ շարունակ ապրել է Մայր Հայրենիքի անկախության երազով: Բայց նոյն երազին մաս է կազմել նաեւ Արցախի անկախութիւնը: Ես փոքր էի, յիշում եմ, որ երբ ազգային-քաղաքական գործիչ Գերսամ Ահարոնեանը խօսում էր Արցախի անկախության մասին, դա հեռաւոր մի բան էր թուում, բայց նա հաւատում էր, որ գալու են Արցախի, ինչպէս նաեւ՝ Նախիջեանի անկախության օրերը: Եւ ահա այսօր մենք տեսնում ենք այդ երազի իրականացումը եւ Հայաստանի անկախության հետ միասին տեսնում եւ վայելում ենք նաեւ Արցախի անկախութիւնը: Մեզ համար այդ փոքրիկ հայկական պետութեան անկախութիւնը, ինքնորոշման որոշումը, ազատ եւ խաղաղ ապրելու կամքը շատ նուիրական է, փայլալից է, գուրգուրանքի կարօտ մի գաղափար, որին ամէն մի սփիւռքահայ ակնածանքով պէտք է մօտենայ եւ իր հայեացքն ուղղի դէպի Արցախ: Ոչ մի պատճառաբանութիւն չպէտք է ունենայ սփիւռքահայը, թէ կարող է ձախողուել, թէ վստահելի չեն այնտեղ եւ այլն... դրանք ընդամենը պատճառաբանութիւններ են:

Պէտք է շարժուել տեղից եւ գործել: Հնարավորութիւններն իսկապէս շատ են, եւ առիթներն էլ տրուած են: Ես շատ եմ կարեւորում սփիւռքի մասնակցութիւնը Արցախի ծրագրերին, եւ կարծում եմ, որ Հայաստան-Սփիւռք յաջորդ համաժողովն էլ Արցախում պէտք է անցկացուի՝ դրանով շեշտելով նաեւ Հայաստան-Սփիւռք-Արցախ եռամիասնութիւնը:

Շարունակութիւնը էջ 6

Արամ Ա կաթողիկոս. Բանիւ ... և գործո՞վ

Երևանում տեղի ունեցող Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի ընթացքում Արամ կաթողիկոսը հրապարակեց իր գործնական կեցվածքն անհամապատասխան է իր խոսքերին:



Ինչ վերաբերում է Սփյուռքի կազմակերպվածությանը, միությանը, ապա, դժբախտաբար, Արամ կաթողիկոսը մինչ այսօր քաջալերում և առաջնորդում է Հայաստանյայց եկեղեցու՝ Անթիլիասի կողմից կատարված տխուր բաժանումը, որը Սփյուռքի ուժերի բաժանվածության գլխավոր պատճառներից մեկն է, եթե ոչ միակ պատճառը...

Կոչ ենք անում Արամ կաթողիկոսին խոսքից գործի անցնելով անմիջապէս վերադարձնել Մայր Աթոռին նրանից բաժանված թեմերը, որպէսզի Սփյուռքը իսկական ուժերի միացման ճամփան բռնի ի շահ հայ ժողովրդի և հայրենիքի գերագոյն շահերի:

Երեկ Երևանում մեկնարկած «Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-սփյուռք 6-րդ համաժողովին ելույթով հանդես եկավ նաև Արամ Ա Կաթողիկոսը:

Վերջինս իր խոսքում կարևորեց Հայաստան-սփյուռք հարաբերություններում փոխադարձ վստահությունը և պատասխանատվությունը: Ըստ նրա՝ պէտք է առաջ շարժվել դերերի հստակեցումներով, առաջնահերթությունների ճշգրտմամբ, գործակցությանը նոր որակտալով:

«Հարկ է համազգային մտածողության մշակույթ ստեղծել և գործել. այս տեսլականով պէտք էղիմագրավել շրջապատող մարտահրավերներին», -ասաց նա:

Կաթողիկոսը շեշտեց սփյուռքը կմաշվի, եթե պատահական միջոցառումներով փորձենքերկրի վերբերը փարատել: Նա մեջբերեց աստվածաշնչյան խոսքերը՝ ժամանակի նշանները պէտք է ճիշտ կարդալ, ախտաճանաչումը ճիշտ կատարել:

«Հզոր Հայաստան, ամուր Արցախ և կազմակերպ սփյուռք. սա պէտք է դառնա ազգային քաղաքականության ուղեցույցը: Հայաստանի անվտանգությունը համազգային առաջնահերթություն է, և սա կպահանջի ամուր կապվածությունը իր հողին՝ Հայաստանին: Հայրենիքը հող ու ժողովուրդ է պետություն և տնտեսություն լցնելուց առաջ», -ասաց նա նշեց, որ Հայաստանի բնակչության աճը պէտք է իրականացնել կոնկրետ ծրագրված միջոցներով:

«Հայաստանը և սփյուռքը գործակիցներ և գործընկերներ չեն, սփյուռքը և Հայաստանը նույնազգի զավակներն են. այս հայեցակարգով պէտք է ծրագրվի Հայաստան-սփյուռք գործակցության բոլոր ծրագրերը: Հայաստանը զբոսավայր չէ, բիզնեսի շուկա չէ, անցագիր չէ, վայ մեզի, եթե միայն այսպէս մտնենանք Հայաստանին: Հայաստանը հայու հավանական տունն է, անցյալի, ներկայի ու ապագայի տունը: Մեր հավաքական տան նկատմամբ անելիքն ասելիք ունենք և պէ տք է ունենանք. պէտք է հզորացնենք այն մեր ողջ կարողությամբ», -ասաց նա:

Նա նշեց, որ սփյուռքը Հայաստանի համար միայն բիզնես չէ. «Սփյուռքը անբաժանելի մասն է ամբողջական հայության: Հետևաբար տնտեսական, մշակութային, կրթական գործակցության կողքին անհրաժեշտ է լրջորեն մտածել սփյուռքի մասնագետներին Հայաստանի կառույցներում մասնակից դարձնելու միջոցների մասին: Սփյուռքի հզորացումը Հայաստանի հզորացումն է և փոխադարձաբար», -ասաց նա:

Հայ Զայն - 20.9.2017

ՌԱԿ Կենտրոնական վարչության ընդլայնված նիստը Երևանում

Մեյտեմբերի 20-ին ՌԱԿ Երևանի Կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ ՌԱԿ Կենտրոնական վարչության նիստը մասնակցությամբ Միջուկի Կենտրոնական



վարչության անդամների, ինչպես նաև ՌԱԿ Գերագույն խորհրդի անդամների՝ Գերագույն խորհրդի ատենապետ ընկեր Վարդան Նազիրյանի գլխավորությամբ, ներկա էր նաև ՌԱԿ Գերագույն խորհրդի անդամ, Թեքեյան մշակութային միության Ամերիկայի եւ Կանադայի Կենտրոնական վարչության ատենապետ ընկեր Երվանդ Ազատյանը:

Կուսակցության նիստին իրենց մասնակցությունն էին բերել Եգիպտոսից ընկեր Խորեն Կալինեանը, Լոնդոնից ընկեր Հրաչ Գույումջյանը, Լոս Անջելեսից ընկեր Վարդգես Գուրոյանը, Բեյրութից ընկեր Պետրոս Թոփչյանը, Արգենտինայից ընկեր Դանիել Յուսեֆյանը:

Տեղի ունեցած նիստի օրակարգային հարցերի մի մասը վերաբերում էր կուսակցության հայաստանակենտրոն գործունեությանը: Քննարկվեց Հայաստանի տարածքում ծավալված գործունեությունը, վերաբաղի մեջ ընդգրկվեցին վերջերս Երևանում տեղի ունեցած ՌԱԿ երիտասարդական շարժման համաժողովը, որն ուներ շուրջ 200 մասնակից գլխավորապես երիտասարդներ, և համաժողովի ընթացքում շուրջ 100 նորագիրներ միացան կուսակցությանը: Այս ամենը վկայում է, որ ՌԱԿ-ը Հայաստանում ուղղություն է վերցրել դեպի երիտասարդություն, իսկ այդ ուղղվածությունը ինքնանպատակ չէ. առկա է այն հաստատ համոզումը, որ մոտ ապագան երիտասարդներին է պատկանում, այն մաքուր զանգվածին, որի հետ պետք է աշխատել, ջանք չխնայել նրան օգնելու համար, քանի որ այսօրվա երիտասարդությունը խելացի է, զարգացած է ունի դրական հավակնություններ:

Օրակարգային 2-րդ կարևոր խնդիրը վերաբերում էր օրերս գումարված Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովին, նրանից ստացած տպավորություններին, արդյունքներին: Մեծ գնահատանքի արժանացավ հատկապես համաժողովի 2-րդ օրվա ընթացքում ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի ունեցած ելույթը, որը լիովին համապատասխանում է ՌԱԿ-ի Հայաստանի վերաբերյալ ցուցաբերած դրույթներին ու մոտեցումներին՝ ՀՀ տնտեսությունը արդիականացնելու, զարգացնելու, արդարություն հաստատելու մեր երկրում, այդպիսով նաև արտագաղթը նվազեցնելու կամ կանխելու:

Նիստի ընթացքում արծարծվեցին նաև գուտ Սփյուռքի ՌԱԿ շրջանակներին շահագրգռող հարցեր, առաջարկվեցին մի շարք ծրագրեր, Հայաստանում երիտասարդական շարժումները առավել զարգացնելու, երկուստեք կապերը սերտացնելու վերաբերյալ:

Կանոնադրական հարցերին ևս անդրադարձ եղավ, և այդ հարցերով գլխավոր պատասխանատու ընկեր Հրաչ Գույումջյանի ներկայացրած ծրագրով էլ որոշվեց շարունակել աշխատանքները:

Անդրադարձ եղավ նաև Սփյուռքի հետ կապված միջոցառումներին ու նախագծերին, որոնց շարքում՝ *Armenian Mirror Spectator* շաբաթաթերթի 80-ամյակի, Թեքեյան մշակութային միության 70-ամյակի միջոցառումները: Խոսվեց նաև գալիք տարի Առաջին Հանրապետության 100-ամյակի տոնակատարությունների վերաբերյալ հարցին մոտենալով այն տեսանկյունից, որ Առաջին Հանրապետության հիմնադիր կազմակերպության մեջ ՌԱԿ-ը հանձին ժողովրդական կուսակցության, մեծ ներդրում է ունեցել, մեծ տեղ է ունեցել Քաջազնուհու կառավարության մեջ զբաղեցնելով կարևոր պաշտոններ:

Որոշվել է տարբեր հրատարակություններով անդրադառնալ, ժողովրդին ներկայացնել ու լուսաբանել չմոռանալով նաև գործերը, որոնք կուսակցությունը կատարել է երկրի պաշտպանության գործում՝ սկսած Վանում Արմենակ Եկարյանի գլխավորած զինվորական մարմնի գործունեությունից, որով առնվազն 120 հազար վասպուրականցիներ փրկվեցին վերահաս կոտորածից:

Արմավիրի ՌԱԿ երիտասարդական ակումբի նախաձեռնությունը. «Անկախության սերունդ»



Մեյտեմբերի 21-ին Արմավիրի ՌԱԿ երիտասարդական ակումբը նախաձեռնել էր «Անկախության սերունդ» խորագիրը կրող բարեգործական բնույթի նկարչական ցուցահանդես-վաճառքը:

Ցուցահանդեսը տեղի էր ունենում քաղաքի Մշակույթի պալատում, իսկ միջոցառման նպատակն էր օժանդակել Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայում վճարովի հիմունքներով սովորող ուսանողներին ուսման վարձի որոշակի մասը վճարելու համար: Միջոցառմանը ներկա էին հյուրեր՝ ինչպես Սփյուռքի ՌԱԿ կառույցներից, այնպես էլ Հայաստանից, որոնք փորձում էին իրենց նվիրատվությունների կամ նկարներ գնելու միջոցով օգնել ուսանողներին՝ տալով կրթության մեջ առաջընթացին նպաստող քայլեր կատարելու հնարավորություն:



Ցուցահանդեսին ներկա էին նաև Արմավիրի քաղաքապետարանի աշխատակիցներ, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ, բազմաթիվ հյուրեր տարբեր վայրերից:

Ցուցահանդեսին իրենց մասնակցությունն են բերել 16-ից ավելի նկարիչներ, որոնց մեծամասնությունը ՌԱԿ երիտասարդական ակումբի անդամներ են, իսկ նրանցից մի քանիսն էլ կուսակցության շարքերն են համալրել վերջերս: Երիտասարդ նկարիչների համար կազմակերպված ցուցահանդեսը դրական ու օգտակար նշանակություն ունեցավ. բացի նկարների վաճառքից ստացած եկամուտներից, երիտասարդները արժանացան քաջալերանքի, խրախուսանքի ու գովասանքի խոսքերի, բարոյական ու հոգեբանական աջակցության, որը, անշուշտ, յուրաքանչյուր սկսնակ արվեստագետի համար շատ կարևոր է:

Միջոցառումը անցավ ջերմ, մտերմիկ ու ոգեշնչող միջավայրում: Բոլոր ներկաներին և հյուրերին, և նկարիչներին, պարուրել էր արվեստով ապրելու ու արարելու զգացումը:

Ցուցահանդեսի հյուրերի թվում էր նաև ՌԱԿ Գերագույն խորհրդի նախագահ ընկեր Վարդան Նազիրյանը, որ «Հայ ձայնի» հետ զրույցում, կիսվելով ցուցահանդեսից ստացած տպավորություններով, նշեց, որ ցուցահանդեսը տարբերվում է կուսակցության երիտասարդների նախաձեռնած նախորդ միջոցառումներից, և այս մեկը կազմակերպված էր շատ ավելի բարձր մակարդակով, հանրության շրջանում ավելի մեծ հնչեղություն էր ստացել, քան նախորդները: «Շատ տպավորված եմ ու հուզված, երիտասարդների խանդավառությունը, դրական լիցքերը մեզ էլ են փոխանցվել: Նկարիչների աշխատանքներն իսկապես շատ գեղեցիկ էին, բարձրորակ, արժեքավոր ու խորիմաստ, և իրենք՝ նկարիչներն էլ հաճախ մեկնաբանում էին իրենց աշխատանքները՝ ներկայացնելով դրանց խորքում թաքնված իմաստն ու նկարների փոխանցած ասելիքը: Ցուցահանդեսին մասնակցող բոլոր երիտասարդների նպատակներն էլ իրականացան թե՛ նյութապես, և բարոյապես», - նշեց ընկեր Նազիրյանը:

Մեզ հետ իր տպավորություններով կիսվեց նաև Լիբանանից Հայաստան ժամանած ՌԱԿ անդամ ընկեր Պետրոս Թոփչյանը, որ բարձր գնահատեց երիտասարդների կատարած աշխատանքը, շեշտեց ցուցահանդեսի բարձր որակ ունենալու հանգամանքը: «Գովելի է նման միջոցառումների կազմակերպումը երիտասարդների կողմից:

Ցանկալի է, որպեսզի դրանք շարունակական բնույթ կրեն, երիտասարդները միշտ նախաձեռնեն այսպիսի միջոցառումներ, ժամանակ տրամադրեն ու պատրաստեն նման գեղեցիկ ու բովանդակալից ցուցահանդեսներ», - ասաց մեր զրույցակիցը:

Նալբանդեան-Մամետեարով Հանդիպումին Քննարկուեցաւ Նախագահներու Հանդիպման Նախապատրաստութիւնը



Շաբաթ, 23 Սեպտեմբերին, Նիւ Եորքի մէջ հանդիպում ունեցան Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամետեարով, ներկայութեամբ ԵԱՀԿ Մինսկի խմբակի համանախագահներ Իկոր Փոփովի (Ռուսիա), Սթեֆան Վիսքոնթիի (Ֆրանսա) եւ Էնտրու Շոֆրի (Միացեալ Նահանգներ), ինչպէս նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անճէյ Քասփրըչիքի:

Հանդիպումէն ետք համանախագահները հրապարակեցին հաղորդագրութիւն մը, որուն մէջ կը նշուի. «Խորհրդակցութիւններուն հիմնական նպատակը տագնապի գոտիին մէջ տիրող ներկայ իրավիճակը քննարկելն էր, բանակցային հոլովոյթի աշխուժացման ուղիներ գտնելը եւ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն միջեւ հանդիպում նախապատրաստելը:

Կ'ակնկալենք, որ այս հանդիպումը նպաստէ կողմերուն միջեւ վստահութեան աճին, եւ անոնք քաղաքական կամք դրսևորեն՝ հարցի առանցքային հարցերու փոխզիջումային լուծումներ գտնելու համար: Նախարարները պատրաստակամութիւն յայտնեցին աշխատելու համանախագահներուն հետ՝ մօտիկ ապագային արդիւնաւետ հանդիպում կազմակերպելու համար: Համանախագահները կը ծրագրեն Հոկտեմբերին այցելել շրջանը»:

Երկու նախարարներուն հանդիպման նախորդեցին ԵԱՀԿ Մինսկի խմբակի նախագահներուն հետ նախարարներու առանձին հանդիպումները: Նախարար Նալբանդեան հանդիպումին ընթացքին շնորհաւորեց Միացեալ Նահանգներու նոր համանախագահը՝ պաշտօնը ստանձնելուն առիթով, ընդգծելով համանախագահութեան կարեւոր առաքելութիւնը դարաբաղեան տագնապի խաղաղ հանգուցալուծման հասնելու իմաստով: Հանդիպման ընթացքին միտքեր փոխանակուեցան դարաբաղեան տագնապը բացառապէս խաղաղ միջոցներով լուծելու տարբերակը յառաջ տանելու նպատակով պայմաններ ստեղծելու առնչութեամբ:

Էտրմ Շիֆ Կոչ Կ'ուղղէ Դասագիրքերուն Մէջ Ընդլայնելու

Հայոց Ցեղասպանութեան Մասին Նիւթերը

Երբ հայ ընտրողները մտահոգութիւն բարձրացուցին Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ ուսանողներուն տրամադրուող խոր տեղեկատուութեան բացակայութեան հարցով, քոնկրետական Էտրմ Շիֆ եւ Քոնկրետի անոր 7 գործընկերները նամակներ ուղարկեցին Քալիֆորնիոյ մէջ պատմութեան դասագիրքերու հրատարակիչներուն՝ կոչ ուղղելով դասագիրքերու յառաջիկայ հրատարակութիւններուն մէջ ներառնել յաւելեալ մանրամասնութիւններ այդ ցեղասպանութեան վերաբերալ:



«Այդ մէկը իսկապէս անհրաժեշտ մաս կը կամէ որեւէ ուսանողի կրթութեան հասկնալու համար, թէ մարդիկ ինչի ընդունակ են եւ ինչ հանգամանքներու մէջ անիկա տեղի կ'ունենայ, եւ ապագային ինչպէս կարելի է խուսափիլ անորմէ», յայտնած է Շիֆ «Կլենտլլ Նիուզ Փրէս»-ի հետ զրոյցի մը ընթացքին:

Առանց Արցախի Ժողովուրդի Որոշումին Ոչինչ Կրնայ Տեղի Ունենալ Պարզեւ Սրբազան



«Նախարարը հնչեցուց ա՛յն, ինչ եղած է Մատրիտեան ձեռքբերումներուն ժամանակ, Գագանեան հանդիպումներուն, նորութիւն չըսաւ: Ըսաւ ա՛յն, ինչ որ միջազգային ասպարէզի մէջ ընդունուած, առաջարկուած տարբերակներէն մէկը եղած է ընդամէնը», - «Շոաբլուր» զինուորական պանթէոնին մէջ, ըստ Panorama.am-ի, լրագրողներու հետ զրոյցի մը ընթացքին Հայ Առաքելական եկեղեցւոյ Արցախի թեմի առաջնորդ Պարզեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեան՝ պատասխանելով այն հարցին, թէ վերջերս ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանը խօսած է տարածքներու վերադարձի հնարաւորութեան մասին, ըսելով, որ խօսքը այն տարածքներու մասին է, որոնք Հայաստանի, Արցախի անվտանգութեան սպառնալիք չեն ներկայացներ, այդ ի նչ տարածքներ են:

Պարզեւ սրբազանի կարծիքով, մտահոգուելու կարիք չկայ: «Չեմ կարծեր, որ գործը հասնի անոր, որ մենք տարածք յանձնենք: Ես չեմ կարծեր», - ըսած է Արցախի թեմի առաջնորդը՝ միաժամանակ ընդգծելով, որ առանց Արցախի ժողովուրդի որոշումին ոչինչ կրնայ տեղի ունենալ:

ԱՄՆ-ն Հաստատ Ունի Հայոց Ցեղասպանութիւնը Ճանչնալու Կարողութիւն Աննա Էշու

ԱՄՆ քոնկրետի ներկայացուցիչներու պալատի հայ գործիչ Աննա Էշուն վստահ է, որ ԱՄՆ-ն պարտաւոր ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը: Ըստ Armenpress.am-ի ան այս մասին ըսած է Ազգային ժողովի մէջ՝ ի պատասխան լրագրողներու հարցին, թէ հնարաւոր է, որ ԱՄՆ-ն ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը Տանըրտ Թրամփի վարչակազմի օրով:



«Մեզմէ շատերը չեն դադրիր աշխատելու այս ուղղութեամբ: Մենք պիտի շարունակենք մեր ջանքերը, որպէսզի Ամերիկայի Միացեալ Նահանգները միանայ միջազգային հանրութիւնը ներկայացնող այն մեծաթիւ երկիրներուն, որոնք արդէն իսկ ճանչցած են Հայոց Ցեղասպանութիւնը: Ատիկա անցեալի սարսափի մասին է, սակայն, ես նաեւ կը կարծեմ, որ մեր այցը կ'առնչուի մեր ապագային ու հայ-ամերիկեան գործընկերութեան, տնտեսական կապերու ամրապնդման: Ատիկա ո՛չ միայն Հայաստանի եւ հայերու, այլեւ կը բխի Ամերիկայի շահերէն», - ըսած է ԱՄՆ քոնկրետականը:



Եզրափակուեցաւ Հայաստան-Սփիւռք...

Շարունակուած էջ 1-էն

Համաժողովի աշխատանքներու ամփոփիչ նպիստի ընթացքին ելոյթ ունեցաւ ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբոյեանը, ապա 4 ուղղութիւններու պատասխանատուները ներկայացուցին թեմատիկ նիստերու քննարկումներու արդիւնքները:

Արդիւնքներու ամփոփումէն ետք համաժողովը ընդունեց յայտարարութիւն: Համաժողովի ծիրէն ներս կազմակերպուեցան շարք մը մշակութային միջոցառումներ:

Սեպտեմբեր 16-ին Հանքաւանի «Նայիրի սփա ռեզորթ» հիւրանոցային համալիրի տարածքին արդէն բացուած է «Նայիրի» երաժշտական այգի թանգարանը, ուր տեղադրուած են հայ երաժշտութիւնը, երգարուեստը, երաժշտական նուագարանները խորհրդանշող պրոնզաձուլ հարթաքանդակներով 10 արձան:

Սեպտեմբեր 18-ին Ալ. Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալէտի ազգային ակադեմիական թատրոնին մէջ տեղի ունեցաւ համերգ՝ Նուիրուած Արաքս Սանսուրեանի ստեղծագործական գործունէութեան 50-ամեակին: Սեպտեմբեր 19-ին Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ նշուեցաւ «Ծագումով հայեր» հաղորդաշարի 10-ամեակը, որուն իրենց մասնակցութիւնը բերին աշխարհահռչակ արուեստագէտներ ինչպէս Ռոզի Արմէն, Միշէլ Լը Կրան, Լուսինէ Լեւոնի, Մարիա Քալաս մրցանակի դափնեկիր Էլլատա Չախոյեանի: Զգալի էր ներկայութիւնը երիտասարդ տաղանդաւոր երգիչներու, որոնք աշխարհի տարածքին երգարուեստի մարզին մէջ ունին իրենց ուրոյն տեղը:

Սեպտեմբեր 20-ին համաժողովին մասնակիցները ներկայ գտնուեցան ՀՀ նախագահի բարձր հովանու ներքոյ տեղի ունեցող «Նայիրի» համահայկական երաժշտական փառատօսի կալի համերգին, որու ընթացքին մեծարուեցան Հայաստանի եւ Սփիւռքի արուեստի նշանաւոր գործիչներ:

Սեպտեմբեր 5-29-ը Կոմիտասի թանգարան-ինստիտուտին մէջ «Բարձր արուեստ» կերպարուեստի կեդրոնին «Հայ հաւաքագրողներու ակումբ»-ին հետ համատեղ առաջին անգամ ըլլալով կազմակերպուեցաւ «Ընտրանի» ցուցահանդէս մը, ուր ներկայացուեցան 19-րդ դարու երկրորդ կէսէն մինչեւ 21-րդ դարու սկիզբին 24 նկար նշանաւոր արուեստագէտներու 30 ստեղծագործութիւնները բացառապէս մասնաւոր կաւաքածոներէն:

Համաժողովի հովանաւորներն էին «Կրանտ Քենտի» ընկերութիւնը, Երեւանի քոնէակի գործարանը, «Վեդի ալկո» ընկերութիւնը, «ԶԱՀ» հիմնադրամը, «Նոյեան» հիւթերու հիմնադրամը, «Ջերմուկ կրուփ» ընկերութիւնը, «Ոսկեվազ» գինիի գործարանը, «Միփան» ընկերութիւնը, «Ավշար-Ալկո» ընկերութիւնը: Տեղեկատուական հովանաւորներն էին Հայաստանի հանրային, «Շանթ», «Երկիր մեդիա», «Արարատ», «Ար» հեռուստատեսութիւնները, Հանրային ռատիոն, «Արմէնփրէս» լրատուական գործակալութիւնը:

Նշենք, որ առաջին համազգային հաւաքը տեղի ունեցած է 1999-ին, Սեպտեմբերին եւ կոչուած է Հայաստան-Սփիւռք խորհրդածողով, 2-րդը՝ 2002 Մայիսին, 3-րդ համահայկական խորհրդածողովը տեղի է ունեցած 2006 Սեպտեմբերին: Առաջին երեք համաժողովները կազմակերպուած էին ՀՀ Արտաքին գործերու նախարարութեան կողմէ, իսկ 2011 եւ 2014 թուականներուն՝ ՀՀ Սփիւռքի նախարարութեան կողմէ:

«Ապագայ»

Հայեացքն Արցախին...

Շարունակուած էջ 3-էն

Խօսելով անկախութեան մասին, ապա տեսնելով արցախցու պայքարը այդ անկախութիւնը պահելու համար, մենք առաւել եւս լցում ենք հաւատով: Այս ժողովուրդը, որ անցել է պատերազմի դժուարին ճանապարհով եւ այսօր էլ դեռեւս չաւարտուած պատերազմի մէջ է, բազմիցս ապացուցել է իր հերոսականութիւնը: Հերոսների մասին մենք հայոց պատմութեան դասագրքերից գիտենք, բայց այսօր Արցախը, նրա համար կռուողները եւ թիկունքում երկիրը կառուցողները այդ հերոսութեան ուղին են բռնել:

Մենք, որպէս կուսակցութիւն, պատրաստ ենք մեր հնարաւորութիւնների սահմաններում աջակցել արցախցուն, ինչպէս նաեւ մենք միշտ կանգնած ենք այն ծրագրերի կողքին, որոնք իրականացնում է Արցախի կառավարութիւնը:

- Ձեր բարեմտադրանքներն Արցախի Հանրապետութեան հոշակման օրուայ արթիւ:

- Մաղթում եմ, որ արցախցին ոչ մի օր չկորցնի իր հաւատը, յոյսը: Երբեք չլքի իր հողը, ամրացնի այն եւ տեղ բացի բոլոր նրանց համար, ովքեր հաւատում են Արցախի ապագային: Նա, որ մէկ անգամ եղել է Արցախում, անպայման վերադառնալու է:

Պոլսոյ 16 Հայկական Դպրոցները Այս Տարի Ունին Միայն 556 Նոր Աշակերտներ



Երկուշաբթի, 18 Սեպտեմբերին, Թուրքիոյ տարածքին սկսաւ նոր ուսումնական տարին, իրենց աշխատանքին սկսան նաեւ Պոլսոյ մէջ գործող 16 հայկական վարժարանները:

«Ակօս»ի թղթակից Իշխան Էրտինչ կը տեղեկացնէ, թէ նոր ուսումնական տարուան համար Պոլսոյ հայկական դպրոցները ունին միայն 556 նոր աշակերտներ, որոնցմէ 348ը նախակրթարանի եւ միջնակարգի, 208ը՝ երկրորդականի աշակերտներ: Այս թիւը մօտ է անցեալ տարուան տուեալներուն, առ այդ աշակերտներու թիւի աճ չէ արձանագրուած:

Մոյն ուսումնական տարուան, Պոլսոյ 16 հայկական դպրոցներու աշակերտներու ամբողջական թիւը կազմած է 2992, 710 երկրորդական եւ 2282՝ նախակրթարանի ու միջնակարգի աշակերտներ:

Նախակրթարաններէն եւ միջնակարգ վարժարաններէն ամենաքիչ թիւով աշակերտներ ընդունած է Պոլսոյ Պէտլու շրջանին մէջ գտնուող Եսայեան վարժարանը՝ ընդամենը 3 առաջին դասարանի աշակերտներ, իսկ ամենէն շատը հայաշատ Շիշլի շրջանի Գարակէօղեան վարժարանը, որ ունեցած է 47 նոր աշակերտներ: Գարազէօղեանէն ետք Պաքրըքէոյ շրջանի Դադեան եւ հայաշատ Սամաթիա թաղամասի Սահակեան-Նունեան վարժարանները՝ համապատասխանաբար 43 եւ 40 նոր աշակերտներով:

Պատմական Գումգափու թաղամասի Պոլսոյ Հայոց պատրիարքարանին կից գտնուող Պեզճեան դպրոցը, որ կը համարուի Պոլսոյ հայկական Մայր վարժարանը, այս տարի ունեցած է 30 առաջին դասարանի աշակերտ:

Երկրորդական վարժարաններու շարքին ամենէն շատ նոր աշակերտներ ունեցած է Պէտլու շրջանին մէջ գտնուող Կեդրոնական երկրորդական վարժարանը՝ 55 նոր աշակերտներ: Եսայեան վարժարանի երկրորդականի բաժինը ընդունած է 48 նոր աշակերտներ: Անոր կը յաջորդեն հայաշատ Փանգալթըի Միխթարեան դպրոցը՝ իր 40 նոր աշակերտներով, ինչպէս նաեւ Սահակեան-Նունեան վարժարանի երկրորդականը՝ իր 37 նոր աշակերտով:

Փարիզի Մէջ Բացուած Ցուցահանդէսին Կը Ներկայացուի Հայկական Ձեռագիրներ Եւ Խորանի Վարագոյր

Սեպտեմբեր 25-ին Փարիզի Insitut du Monde Arabe թանգարանին մէջ բացուած է «Քրիստոնէութեան ծնունդը Միջին Արեւելքի մէջ» խորագիրով ցուցահանդէսը: Բացման արարողութեան ներկայ եղած է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնն ու Լիբանանի նախագահ Միշէլ Աունը:



Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի դիւանապետ Յովնան Պաղտասարեան ֆէյսպուքեան իր էջին մէջ գրած է, որ ցուցահանդէսին ներկայացնելու համար Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը ուղարկած է 14-րդ դարու երկու ձեռագիր եւ 1798 թուականի խորանի վարագոյր մը:

Ցուցահանդէսին անդրադարձ կայ նաեւ Հայոց Ցեղասպանութեան՝ նկարներու միջոցով ներկայացնելով հայերու հաստատումը Սուրիոյ եւ Եգիպտոսի մէջ:



ΔΕΛΤΙΟ ΤΥΠΟΥ

Θεσσαλονίκη, 19 Σεπτεμβρίου 2017

Συμμετοχή Ελληνοαρμενικού Εμπορικού και Βιομηχανικού Επιμελητηρίου Ελλάδος στη Διεθνή Έκθεση Θεσσαλονίκης



Με ιδιαίτερη επιτυχία ολοκληρώθηκε για 4η συνεχόμενη χρονιά η συμμετοχή του Ελληνοαρμενικού Εμπορικού και Βιομηχανικού Επιμελητηρίου Ελλάδος στην 82η Διεθνή Έκθεση Θεσσαλονίκης σε συνεργασία με την Πρεσβεία της Δημοκρατίας της Αρμενίας στην Ελλάδα.

Η τεράστια προσέλευση επισκεπτών στη Δ.Ε.Θ. που ανήλθαν φέτος στα 263.762 άτομα σε συνδυασμό με μια πανσπερμία παράλληλων εκδηλώσεων έδωσε τη δυνατότητα σε πλήθος κόσμου να γνωρίσει τα αρμενικά προϊόντα αλλά και να ενημερωθεί για τις δραστηριότητες του Επιμελητηρίου και τις επιχειρηματικές ευκαιρίες που παρουσιάζει η Αρμενία σε όλους τους τομείς.

Στην Έκθεση παρουσιάστηκαν τα διεθνούς φήμης μπράντι Αραράτ, οι πασιγνωστες ετικέτες της αρμενικής οινοποιίας Nayan Tapan και Karas καθώς και τα τελευταία μοντέλα της ωρολογιοποιίας AWI. Την παράσταση έκλεψαν τα περίφημα κρασιά Aragat που είναι εξολοκλήρου φτιαγμένα από φρούτα όπως ρόδι, δαμάσκηνο και βύσσινο.

Το περίπτερο του Επιμελητηρίου τίμησε με την παρουσία του η Α.Ε. ο πρέσβης της Δημοκρατίας της Αρμενίας στην Ελλάδα κ. Fadey Charchoghlyan.

Στους άμεσους στόχους του Ελληνοαρμενικού Εμπορικού και Βιομηχανικού Επιμελητηρίου Ελλάδος είναι η συμμετοχή σε επιπλέον εκθέσεις στην Ελλάδα μεταξύ των οποίων η ερχόμενη Philoxenia στη Θεσσαλονίκη (10-12 Νοεμβρίου) που αποσκοπεί στην αμοιβαία ενίσχυση του τουριστικού ρεύματος ανάμεσα στις δύο χώρες.

ԱԻԵՏԻՍ ՊԱՐԻ ԴՊՐՈՑ

ԱԻԵՏԻՍ պարի դարը կը հրաշքէ 4 տարեկանէ սկսեալ բոլոր փափաքողներուն հայկական ժողովրդական պարերն մասնագիտացումն ուսուցանուի:

Հիանք մեր դարունը մշակութի արժանի կրողն ու փոխանցողը (Նևու Գոսնու, Լիբէա):

Պարունը մանկավարժ Շուշանիկ Մելերճեան: Հեռ. 69 97 27 0130, 69 77 16 1718, 69 96 9 13243

Եκμάθηση Αρμένικων παραδοσιακών χορών Σχολή χορού "ABETIS"

Επαγγελματική διδασκαλία Αρμένικων παραδοσιακών χορών σε αγόρια και κορίτσια απο 4 ετών. (Νέος Κόσμος, Νίκαια).



Պ Տ Ո Յ Տ

Հ.Բ.Ը.Միութեան Աթէնքի «Անի» Պարախումբը սիրով կը հրաշքէ ձեզ մասնակցելու միտեայ պտոյտի դէպի Օրհնի Արգատիա Կիրակի 8 Հոկտեմբեր 2017-ը

Մեկնում Intercontinental-էն առաւօտեան ժամը 7.45-ին եւ Պէդոյիաննի-էն 8.00-ին: Տեղ ապահովելու համար կրնաք կապ հաստատել Լէոն Ադապրեանին հետ հեռ.- 6955589626:

XXX

Η χορευτική ομάδα της Γενικής Αρμενικής Ένωσης Αγαθοεργίας «Ανί», σας προσκαλεί στην μονοήμερη εκδρομή που διοργανώνει προς την Ορεινή Αρκαδία, την **Κυριακή 8 Οκτωβρίου 2017**

Η αναχώρηση θα πραγματοποιηθεί από το Intercontinental στις 7.45 π. μ. και από την Μπελογιάννη στις 8.00 π. μ. Για κρατήσεις θέσεων, παρακαλούμε όπως επικοινωνήσετε με τον Λεβόν Αγαζαριάν στο τηλέφωνο 6955589626.

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Հ.Բ.Ը.Միութեան "Արթաքի Գալիփաքեան" վարժարանին եղած են հետևեալ նուիրատուութիւնները:

- Greek Armenian Association of Los Angeles 8.000.00 եւրո
- Գէորգ Արապեան 1.900.00 եւրո



ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Հ.Բ.Ը.Ս. «Ա. Գալիփաքեան» վարժարանի երկու դարոցական ինքնաշարժները փոխարինելու նպատակով, ԱՄՆ-էն եղած են հետևեալ նուիրատուութիւնները:

- 1) Պրն. Յարութին Գնաճեան \$200
- 2) Պրն. Միքայէ Լահայէտ \$200
- 3) Պրն. Եփրեմ Քաջիկեան \$100
- 4) Պրն. Գէորգ Քաջիկեան \$100
- 5) Պրն. Սարգիս Քաջիկեան 400 եւրո

Գրաւուած Օր 4 Նոյեմբեր, 2017 Հայ Աւետարանական Տիկնանց Մարմնի կողմէ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մեկալանութիւն ԱՐԱՐԱՏ Մ Մ ՄԻՈՒԹԻՒՆ Միաբն 33, Նիքեա, Յունաստան Համալարգային շարուածքը եւ Էջաղումը՝ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շարափաթերթի Տնօրէն՝ Ընկ. Մարգիս Խաչատուրեան Արուստանէր - Փաստաբան՝ ընկ. Յակոբ Ճեւճեան "ՈՐ ԱՇԽԱՐ" Արմենիկ Էթումադալա Էթումերա Իտուկտիւսիա "ԱՐԱՐԱՏ" Փիւլոլոլոլոլոլ Աթլիտիկո Շումաթիւո ճիւթոնտիէ Տարկիէ Մատատուրադ Էկճոտիէ - Իաւոթոս Փեւճիան Գիւղոլոլոլ Տիէտու 33 - TK 18450 - Նիւուա Դիլ: 210-4926085 "ՈՐ ԱՇԽԱՐ" Armenian Cultural Social Weekly 33 Sistou Str. GR 18450 NIKEA GREECE Tel-Fax: 00+30+210-4926085

Բաղի խմբագրականներէն, յօդուածագիւրներն, տեսակէտներն ու գաղափարները անպայմանօրէն չեն արտայայտելը թերթին ուղեգիծը:

Երեւանի Մէջ Բացուեցաւ Գրատպութեան Թանգարան

ԵՐԵՒԱՆ.- «Մեդիամաքս»ը կը հաղորդէ, որ Հայաստանի ազգային գրադարանի թամանեանական մասնաշէնքին մէջ բացուեցաւ Գրատպութեան թանգարան, որ կը ներկայացնէ հայ տպագրութեան անցած ճանապարհը:



Թանգարան հիմնելու գաղափարը ծնած էր 2012ին, երբ կը նշուէր հայ գրատպութեան 500ամեակը եւ ԵՈՒՆԵՍԿՕ-ն Երեւանը կը հռչակէր Գիրքի համաշխարհային մայրաքաղաք:

Թանգարանի բացման ներկայ էր մշակոյթի նախարար Արմէն Ամիրեան:

Վեց ցուցասրահներու մէջ կը ներկայացուին նախագրային շրջանէն մինչեւ ժամանակակից տպագրութեան ուղին: Մեծ ցուցասրահ յատկացուած է հայ գրատպութեան «առաջնեկներուն». այցելուները կրնան տեսնել 1512 թուականին Վենետիկի մէջ հրատարակուած հայատառ առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրք»ը, առաջին Աստուածաշունչը, որ լոյս տեսած է 1666ին Ամսթերտամի մէջ, առաջին ամսագիրը Մատրասի մէջ տպագրուած «Ազդարար»ը: Այնտեղ կը ներկայացուի նաեւ ամբողջութեամբ հայատառ առաջին քարտէսը «Համատարած Աշխարհացոյց»ը:

Թանգարանին մէջ կը ներկայացուին հայկական գրատպութեան մեծ կէտրոնները:

«Եւրոպական երկիրներու, Անդրկովկասի, արեւելքի, պատմական Հայաստանի տարբեր քաղաքներու մէջ տպարաններ կը բացուէին, հայերէն տառեր կը ձուլուէին ու գիրքեր կը հրատարակէին:

Կարելոյ ցուցանմուշ ունինք: 1848 թուականին Շամախի՝ ներկայիս Ատրպէյճանի տարածքին մէջ, երեք հայ ընկերներ տպարան հիմնած են: Առաջին հրատարակութիւնը չունինք, բայց կայ 1851 թուականին տպագրուած «Գիտութիւն Շնորհաց»ը: Այդ տպարանին մէջ բաւական շատ հայերէն գիրքեր տպագրուած են», կ'ըսէ Ազգային գրադարանի փոխտնօրէն Հայկանոյշ Ղազարեան:

Սրահներէն մէկուն մէջ կը ներկայացուին գրահրատարակչական արհեստագիտական միջոցներու զարգացման փուլերը՝ տպագրական հաստոցներէն մինչեւ ժամանակակից կրիչ սարքերը:

«Տպագրական երկու եզակի մեքենայ ունինք. անոնք շուրջ 100 տարեկան են մէկը արտադրուած է Խորհրդային Միութեան մէջ, միւսը գերմանական է: Մեր տպարաններէն ձեռք բերած ենք, հազիւ կրցած ենք փրկել զանոնք, որպէսզի իբրեւ մետաղի ջարդօս չօգտագործուին», կը յայտնէ Ազգային գրադարանի տնօրէն Տիգրան Զարգարեան:

Թանգարանին մէջ կը ցուցադրուին նաեւ Հայաստանի եւ Արցախի մամուլի եզակի նմուշներ եւ ազգային փոքրամասնութիւններու Հայաստանի մէջ տպագրուող մամուլի օրինակներ:

Յուշանմուշներու հիմնական մասը վերցուած է հայատառ տպագիր նիւթի ամենամեծ պահոցի՝ Ազգային գրադարանի հաւաքածոներէն:

Եօթնամեայ Արէն Էմրիկեան՝ Ճատրակի Աշխարհի Ախոյեան

ՇԻՔՍԿՕ, «Շիքակօ Թրիպլուն».- Շիքակոյէն 7ամեայ Արէն Էմրիկեան իլսած է Ճատրակի աշխարհի ախոյեանութեան՝ մինչեւ 8 տարեկան երէխաներու «Քատեթ» մրցանքի ախոյեանի տիտղոսը:



Էմրիկեան մասնակցած է 11 խաղի եւ կրցած է ամենաշատ միաւորները հաւաքել սոյն ախոյեանութեան ընթացքին, որ տեղի ունեցած է Պրագիլի մէջ:

Արէն սկսած է Ճատրակ խաղալու իր մօր՝ Անիի մղումով, երբ վերջինս նկատած է, թէ երէխան հակում ունի այդ մարզաձեւին հանդէպ:

«Ամէն օր 1.5 ժամ փորձ կ'ընէի: Մայրիկս արդէն միշտ կը պարտուի ինձմէ, իսկ հայրիկիս (Արմէն) հետ խաղալը անելի հետաքրքրական է: Ես կրնամ 4-5 քայլ առաջ մտածել եւ չեմ սիրեր պաշտպանուիլ: Յարձակման դիմելով՝ խաղս անելի յաջող կ'ընթանայ», կ'ըսէ Արէն:

Տից անոսուսէս անօ 12 Օկտաբրիօս ը տայնիա «The Promise»



«Մէկ ամսուան համար չենք նկարած ֆիլմը, այլ՝ 100 տարուան». «Խոստումը» ֆիլմին բեմադրիչը Երեւանի մէջ

Հայոց Տեղասպանութեան մասին «Խոստումը» ֆիլմի բեմադրիչ Թերրի Ճորճը Երեւան ժամանած է: Ասիկա անոր երկրորդ այցն է Հայաստան. առաջին անգամ այցելած էր չորս տարի առաջ՝ ֆիլմին համար ուսումնասիրութիւններ ընելու նպատակով, իսկ այսօր՝ արդէն ֆիլմը պատասխանէր:



«Խոստումը» ֆիլմի բեմադրիչը լրագրողներու հետ հանդիպման ժամանակ նշած է, որ իր ֆիլմը յաջող կը համարէ. «Երբ ոչ հայ բեմադրիչներու կամ հանդիսատեսի կողմէ կը լսեմ, որ երբեք չէին լսած Հայոց Տեղասպանութեան մասին եւ կը զարմանան, որ ԱՄՆ-ը կամ Մեծ Բրիտանիան մինչ օրս չեն ճանչցած զայն եւ որ Թուրքիոյ կառավարութիւնը կը մերժէ ցեղասպանութիւնը, այս առումով, կը կարծեմ, ֆիլմը յաջողած է», - ըստ style.news.am-ի ըսած է բեմադրիչը եւ ընդգծած,- «Ֆիլմը դիտողներէն լսած եմ յատկապէս երկու կարծիք՝ «մենք շատ քիչ գիտինք Հայոց Տեղասպանութեան մասին եւ մենք չէինք գիտեր այդ մասին որեւէ բան»: Կը կարծեմ՝ ֆիլմը որոշ կրթական խնդիրներ կը լուծէ նաեւ այս առումով եւ, բացի այդ, մենք կը փորձենք ֆիլմին միջոցով ուշադրութիւն հրաւիրել փախստականներու խնդիրին, որ մինչ օրս կայ»:

Ան նշած է, որ 20-րդ դարու ամենամեծ ոճրագործութիւնը դեռ չէ ճանչցուած միջազգային հանրութեան կողմէ եւ այդ պատճառով այսօր կը տեսնենք այն, ինչ որ կը կատարուի Մուրիոյ եւ Մեանմայի:

«Մենք մէկ ամսուան համար չենք նկարած այս ֆիլմը, այլ 100 տարուան», - յայտարարած է ան:

Ասուլիսին ներկայ՝ «Խոստումը» ֆիլմը արտադրող Էրիք Իսրայէլեան արնդրադարձած է ֆիլմի soundtrack-ի հեղինակ եւ կատարող Քրիս Քորնելի դերին: Նշենք, որ Քորնելը անձնասպանութիւն գործած էր այս տարուան Մայիսին:

«Տաւօք, ան այժմ մեր հետ չէ. բայց ես շատ կ'ուզեմ, որ դուք բոլորը գիտնաք, թէ ան որքան ոգեւորուած էր, որ ան, հայ չըլլալով, այդքան սրտացաւ էր այս խնդիրին հետ: Ան սիրտ ու հոգի դրած էր իր երգին մէջ, ան կը դատապարտէր ցեղասպանութեան մերժումը»: